



Մեծ թվով հայ մտավորականներ մասնակցեցին Հայրենական պատերազմին և իրենց ոգորումներով, երբեմն նույնիսկ արյամք պահեցին իրենց ժողովրդի մարտական փառքը: Այդ մտավորականներից էր նաև

բանաստեղծ և բազմավաստակ հայագետ դոկտ. պրոֆ. Ասատոր Մնացականյանը: Այս երկու բանաստեղծությունները գերության տխուր օրերի արձագանքներ են՝ բանաստեղծի պայծառ հիշատակը պանծացնող:

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՐԱԺԵԾ

Մնաք բարով, Հայաստան, Խահակյան ու Մասիս,
Զանգով, ջինչ ու կարկաչոն, վեհ Արագած ու Սևան,
Մնաք բարով՝ Արարատ, կանաչ ափեր Արաքսի,
Եվ դու, անո՞ւշ, իմ անո՞ւշ, անո՞ւշ Երևան:

Երևանյան տոթ ու զով, Երևանյան արեգակ,
Մրգեր, մրգեր մեղրածոր, Երևկոններ ու լուսին,
Ես քշվում եմ դեպ հեռուն՝ ձեր կարոտն իմ կրծքի տակ,
Երապելով անընդհատ, ամեն բոցի ձեր մասին:

Օ՛, այդ կարոտն անսահման և հարածուն, և հվոր,
Անշուշտ ինձ ետ կրերի դեպ ձեր գիրկը դյութական,
Եվ ձեր բույրը շնչելով, պուրակներում ամեն օր,
Կթարմանամ որպես տունկ՝ թույլ ու տկար, հյութաքամ:

Եվ վարսերն իմ, որ այն ժամ ձերմակ կլինեն,
Կսանեան վերստին, կառնեն սաթի գոյն,
Կմանկանամ ես նորից, «քոստան» խաղ կանեմ
Փոշիներում փողոցի կամ զառ մեր այգում...

Մնաք բարով Հայաստան, Խահակյան ու Մասիս,
Զանգով՝ ջինչ ու կարկաչոն, վեհ Արագած ու Սևան,
Իմ հայրենի Ռսկեվազ, Վմբուխտ ափեր Քասախի,
Եվ դու անո՞ւշ, իմ անո՞ւշ, անո՞ւշ Երևան:

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Եթե կաս արդեն, դո՞ւ, ոռոմք թշնամու
Եվ պիտի ընկնես իմ հայրենիքում,
Թող քեզ ուղեկցի ընթացքը քամու,
Բերի նետելու իմ վշտու հոգում:

Որ՝ չընկնես այնտեղ, ուր ապրում են արդ
<արակատներս՝ որբացածի պես,
Ուր ննջում է իմ մանկիկը հանդարտ,
Ուր թողել եմ իմ խնդրությունը ես:

Ի՞մ սրտում պայթիր, որպեսպի հանկարծ,
Չպայթես քիվին՝ ձեռագըրատան.
Եվ ո՞չ մի, ո՞չ մի, ո՞չ մի դաժան կայծ,
Չհուսի անդորրն այդ վեհ սրբության:

Բեր ինձ ավերման քո բոցերը վառ,
Թող բփկ-բփկ մտնեմ մահու երթ,
Միայն թե ապրեն մեր նախնյաց պայծառ
<իշատակները մագաղաթաթերթ.

Միայն թե ապրի մանկիկս անվտանգ,
Ու չմարի ծուխն իմ հայրենի տան...

20.03.43
Գալաֆատ

